

ՌԱՓԱՅԷԼ ԵԴՈՒԱՐԴ ՂԱՐԱՄԵԱՆ

(Shu յ'էջ 61)

Այսպիսի գործովալի սրտով, խրատներով ու քաջալերութեամբը ճամբայ դրաւ Ռափայէլ Եդուարդ իր որդիքը Բուզայեան վարդապետին հետ: Կարծես ներքին ազդեցութիւն մը կ'իմացընէր թէ մէյմ'ալ պիտի չտեսնէ այն սիրելի զաւկըներն, որոց կրթութեանն ու դաստիարակութեան համար այնչափ և այնպիսի փոյթ և խնամք ունէր:

Յաջող նաւարկութեամբ կը կտրեն նոքա Ուկրաինոս ծովն, ու Լիւպոն քաղաքն հասնելով կ'աւետեն զայն իրենց ծնողաց (13 հոկտ. 1786): Մայրերնին Մարիամ իր Ուսանաքով հետ պատասխան կու տայ այն նամակին: Կը յայտնէ սրտին ուրախութիւնը այդպիսի յաջողակ ուղևորութեան համար. բայց միանգամայն կը յիշեցընէ թէ այն ատեն կատարեալ կ'ըլլայ իրենց սրտին ուրախութիւնը՝ երբ դիտուած վախճանին ու նպատակին հասնին: Այդ պատճառաւ հարկ կը համարի կրկնել խրատներն չոր արդէն հայրերնին տուած էր՝ իրենցմէ բաժնուելու ժամանակ. «Պատուէրն իմ տամ՝ ձեզ, կ'ըսէ, նախ միշտ հնազանդ եղէք վերապատուելոյն, և ընդ ուսուցիչն ձեր պատուէք. և պատուիրանն էն ինչ վասն ձեր բարութեան. միք զանց ունէք. զի ժամանակն ձեր այժմ'այ. գիտէք զի ի մեր տեսութեանէն ձեզ հեռացնելն պատճառն՝ ոչ այլ ինչ է, թէ ոչ ուսում և բարի վարք սովորելն այ: Սիրելի որդիք իմ, մի ամանչեցուցանէք մեզ այլոց մօտ. որ ի գալուստն ձեր աստ տեսանեմք ձեզ իմաստուն և ամենայն շնորհօք լի. Տէրն մի արասցէ, անդրադարձն տեսանեմք ձեզ, որ տխրութիւնն և մահ է մեզ... Սիրելի որդիք իմ, մի մոռանայք զհաւատն ձեր ուղղափառ. սիրելի որդի իմ Ռափայէլ, դու մեծ տաքան զքոյ եղբայրն. և շնորհքն Աստուծոյ քե տված այ, և ունես շնորհ ըստ կարեաց քոց, առ եղբօրդ միշտ խրատել մին խնայել: Սիրելի իմ Յովհաննէս, միշտ հնազանդիր եղբայրն քոյ Ռափայէլին, և թող զմանկութեան բնութիւնն քոյ. և ջանա լինես իմաստուն»:

Սակայն այդ բարի և ընտիր մայրն՝ ալ պիտի չտեսնէր իր սիրելի զաւկըներն. վասն զի 1790 սեպտեմբեր երեքին դրած նամակաւն առ Բուզայեան վարդապետ, կը գուժէ Եդուարդ անոր մահուան ցաւալի լուրը, և կ'իմացընէ թէ անմիջապէս ինքն ալ ճամբայ պիտի ելլէ գալ Եւրոպա. «Առանց երկբայութեան, կ'ըսէ, տեսանես զիս ի գալու մայիսի ամսոյն. էի հաստատեալ՝ զրեալ եմ Բանկալայ տեղ առնուլ ի մի ի նաւից կուսպանուն որ զիպող են ի Մատրաս գալոյ յառաջիկայ յունուարի ամսոյն, ընդ որում ճանապարհորդեմ առ ձեզ անխափան, եթէ Տէր կամեսցի, փոքրիկ Լուիզովն»:

Այդ նամակին երկրորդ օրինակն ճամբայ դրած ատեն՝ յաւելուած մը կ'ընէ 1794 յունուար 29 թուականաւ. յորում կրկին կ'իմացընէ թէ փետրուար 15 անխափան ճամբայ ելլող նաւով մը կու գայ յԱնգղիա, և կը յանձնէ իրեն համար բնակութեան տեղ պատրաստել: Նոյն յաւելուածով լուր կու տայ նաև իրեն փեսայացընելը զՍամուէլ Մկրտիչ Մուրատեան՝ տալով նմա հարսնութեան զերէց դուստրն իւր զԱննա:

* * *

Այս վերջի որոշմանէն քանի մը տարի յառաջ, 1789 գեկտեմբեր 31ին, սրբոյն Դէորդայ բերդին մէջ գտնուած ատեն՝ պարոն Եղուարդ յօրիններ և կարգի դրեր էր իր ստացուածոց բաժանումը. և այն առթով պատրաստեր էր նաև իր կտակը, որոյ մէջ հետևեալ խօսքերով յօդուած մ'ալ կար.

«Կարգադրութիւն և միտք զլիսոյ գումարի ողորմութեան, որ այժմ գտանի ի հաշուէդիրս իմ, և որ պարտի անայլայլաբար ի գործ դնիլ ի ժառանգաց իմոց և ի կտակակատարաց, սովին հետագայ եղանակաւ և կերպիւ: Որ ինչ գումար միանգամ գտանի ի գլխի անդ դրամոյն առնելաց, զիցի ի գանձատան քովմանեայի. առեալ ի նըմանէ մուրհակ պարտաւորութեան վճարման շահուն. և այս շահ յատկացուցի վասն թարգմանութեան և տպագրութեան ի հայ բարբառ Հռովմէական պատմութեան ի 16 հատորս որ յուրն ծալս. ևս և Հնախօսութեան ի 13 հատորս սր յուրն ծալս. երկուցունց գործոց պարոն Ռօլլէնի: Վասն որոյ բովանդակ շահն յառաջ եկեալ ի գումարէ ասացեալ զլիսոյն տացի վասն այն վախճանի, մինչև ցըկատարումն վերոյասացեալ երկուցունց գործոց: Եւ յետ այնորիկ ասացեալ շահն դարձուցի և մերձեցուցի ի գլուխ դրամոց զըպրատան միոյ, վասն աղքատ Հայոց մանկանց, այնչափ թուով որչափ բաւական լիցի այնու եկամտիւ շահուն, զի մանկունք և վարժապետք նոցին կարիցեն կեալ վայելապէս: Եւ այս են իմ կամք, զի Վ. Հ. Նիկողայոս Բուզայեան կարգեսցի ուղղիչ և գործադիր վերոյասացեալ երկուցունց գործոց և դպրատանն՝ զամենայն ժամանակըս կենաց իւրոց, և տացի նմա իշխանութիւն կարգելոյ զյաջորդս իւր, առնել և կատարել զասացեալ կարգադրութիւնն իմ. վկային ձեռքն իմ ի վերոյ գրեալ աւուրն և տարին»:

Եղուարդ Ռաֆայէլ Ղարաման:

* * *

Աննա դուստրն ամուսնացընելով տեղաւորելէն ետքը՝ հետն առաւ

Եղուարդ իր Լուիզ որդին, ու ճամբայ ելաւ գալու յԵւրոպա: Այս ճանապարհորդութեան զլիսաւոր մէկ պատճառն ալ՝ բաց ի որդւոց տեսութենէն, որոնց կարօտովը կը հալէր, օդափոխութիւն մ'ալ ընել էր, և որոյ անհրաժեշտ պէտքը կը զգար. վասն զի տկարութիւն մը սկսած էր զօրանալ վրան, և բժշկական դարմանը չէր յաջողած գտնել Հնդկաց երկրին մէջ:

Ճամբէն թուղթ մը գրած է առ փեսայ Սամուէլ Մուրատ, ծանուցանելով թէ՛ յաջող ճանապարհորդութիւնն և թէ՛ տկարութեանն հանգամանքը: Այդ նամակը ուղղած է ի Բարեյուսոյ Գլխոյն և որուն պատասխանը գրեց Մուրատ ի Մատրասէ. «Հրամանոց ապրիլի 12էն կապիցն գրած թանկ շնորհալին՝ մենք տեղս ստացանք, կ'ըսէ, բազում ուրախութեամբ և հրջուանօք. և գոհութիւնս վերառաքեցաք Բարեբարին՝ որ անփորձ և անմնաս հասոյց զպատուականութիւնդ, և արժանիս արար զմեզ շնորհալի գրոյդ ընդերցմանն. և արդ աղերսական մաղթանօք հայցեմք ամենատեառնէն զի յետ փոքրը միջոցի արժանացուցէ զմեզ ընթեռնուլ զպատուական առողջութենէդ ի Լոնտօնու, որպէս ազնուութիւն քոյ բարւոք գիտէ զի այդ է առաջին բաղձանք մեր»... Հնդկաց երկրին պատերազմաց վրայ քանի մը տեղեկութիւններ ալ կու տայ, և կ'ուեւցընէ. «Վասն անառողջութեան անձինդ հոգւովս տրտում եմ. թէպէտ ան անառողջութենիցն չէ որ զմեզ մտածութեան մէջ գցի, բայց միշտ տըխրութեանց մէջ որ մին փոքրիկ նեղութիւնն որ հրամանոցէն լսենք թէ ունիս. ինչ և իցէ. աղաչեմ զԱստուած մինչ ի այժմ՝ շատ վաղից նաւահանգիստն Լոնտօնու խասած լինէք և բոլոր ճանապարհին նեղութիւնն մոռցած, և յուսամ փոքր միջոցում մեք էլ ձեր հրամանոց նաւահանգիստ սալամաթ խաանելն և պայծառ առողջութեանդ լուրըն կարդամք, մեր տրտմութիւնն փարատվի և կատարեալ ուրախութիւնն ստանամք»:

Սակայն այդ փափաքելի աւետեաց լրոյն հակառակ՝ ցաւալի գոյժ մը սփռեցաւ ի Հնդիկս, և պարօն Եղուարդայ մերձաւորաց և բազմաթիւ բարեկամաց սուգ և տրտմութիւն պատճառեց: Լոնտրայի նաւահանգստին մէջ՝ արգելանաց զգուշութեան օրերը կատարած աւտեն, անակնկալ մահը հասեր էր վրան: Լսեց զայս Բուզայեան վարդապետ, և հաղորդեց թէ սգազգեաց որդւոցը և թէ ի Հնդիկս: Ինքն Եղուարդ կարծես թէ նախազգածութիւն մը ունեցեր էր այդ աղիտից. վասն զի Մատրաս եղած աւտեն՝ երբ ճանապարհորդութեան պատրաստութիւն կը տեսնէր, փեսայէն բաժնուելէն երկու երեք օր յառաջ՝ զնաց անոր տունը, և ինչպէս Մուրատեան կը պատմէ ի թղթին առ Բուզայեանն, «Իբրու կէս ժամու միջոցաւ արտասուելով՝ ասէ. Սամուէլ, չէ պարտ քեզ մտածել թէ փեսայացար ինձ օրինաւոր որդի, այլ բերի զքեզ հայր մանկանցս: Տէր մի արասցէ,

եթէ պատահիցի ինձ մահ՝ յայսմ՝ ճանապարհորդութեանն՝ համանշամայն զշորեսին մանկունսն իմ բերչիր աստ»։ որովհետեւ, ինչպէս տեսանք, ոմանք անոնցմէ արդէն յԵւրոպա փոխադրուած էին դաստիարակութեան և ուսման համար։

Սամուէլ Մուրատ այսպիսի անակնկալ աղիտից համար՝ իր սրտին զգայած տրտմութիւնն ու սուգը՝ ի 1792 յունուար 26 ամսաթուով առ Բուզայեանն գրած թղթին մէջ կը ստորագրէ. «Ընկալեալ եմ, կ'ըսէ, զգութալի նամակ հայրութեանդ ի յուլիսի 26 առ ինձ և առ ամուսինն իմ. և յուլիսի 28էն առ պարոն Միքայէլն և առ ինձ հինգերորդում աւուր յունուարի. արդարեւ անտանելի էր մեզ լուր մահուան սիրելոյն մերոյ աղա Եղվարդի»։ ու կը յանձնէ վարդապետին որ հանգուցելոյն երկու որդւոց ընկերելով նորէն դառնայ ի Հնդկիս, որով թէ Եղուարդայ կամքը կը կատարուի, ու թէ որքացեալք իրենց ազգականաց ու բարեկամաց բով կրնան սփոփանք և մխթարութիւն գտնել։

Այս վախճանաւ գրած է Սամուէլ Մուրատնաւ հետեւեալ նամակն առ Բուզայեան, որոյ թուականն է ի 1792 ի փետրուարի, առանց ճիշտ օրն նշանակելու. «Ի յունուարի 19 և 26 գրեցի յարգութեանդ զամենայն ինչ զորս կախի ի կարողութենէ մերմէ. այժմ՝ այս ինչ կամիմ՝ ծանուցանել յարգութեանդ, զի ողորմած հոգի աղա Հետվարդն խօսի ի ներ կտակին, ի վերայ հաշուի միոյ ողորմածութեանն և յառաջադրութեան իւրոյ, զորս գրեալք էր յատուկ թղթի՝ ասելով, զոր ինչ ի յայսմ հաշուի գումարեալ գտանիցի՝ կամք են իմ զի զընիցի ի գանձատանն կուսպանսու, և տարեկան եկամուտս տացի թարգմանել և տպել ի հայ բարբառ Հռօմէական պատմութիւնն 14 հատոր ին օքտավ, և Հնոց պատմութիւնն 13 հատոր ին օքտավ ի պարոն Ռօլէնէն արարեցեալ. որպէս ասէ, միջնորդութեամբ վերապատուութեանդ տուեալ է վասն գործոյս ութն հազար ռուբլի. այժմ՝ եւս միջնորդութեամբ յարգութեանդ յետ աւարտելոյ գործոյս՝ վերոյիշեցեալ հաշուէն զոր ինչ քանակութեամբ եկամուտ որ ելցէ՝ տացի վասն շինութեան և հաստատութեան դպրատանն միջնորդութեամբ և գործածութեամբ յարգութեանդ. և դպրատունն լինիցի ի ներ պաշտպանութեան քոյ ի կենդանութեան քում. և յետ այնու կարես նշանաւորել տիրէքթօր կամ գործածօղ կամ պաշտպանիչ վասն դպրատանն, որպէս օրինակ գրեցելոյն եդի ի դրիս անկլիական լեզուաւ, երկրայելով թէ մի լիցի իմացուած բանին ոչ իցեմ գրեցեալ հայկական բառիւ կատարելապէս, որպէս զի հայրութիւնըն. քոյ այդր՝ առաւելապէս ծանիցես զիմացածս նորա։ վերջապէս ըստ գրեցելոյ ողորմած հոգուն՝ ի հաշուի անդ գտանին 7309 հուն 32 ֆանմ 27 կաշ, զոր ի կտակակատարացս ձեռնադրեցեալ հաստատեցաք պատուելի կօռտումն ընդ ի վերայ բանիւ յառաջադրու-

թեանն գրոյն, որ եղև իբր մասն կտակի ողորմած հոգւոյն. վասն ուրոյ, վերապատուեալ հայր, յոյժ հարկաւոր տեսանեմ զգալուստ յարգութեանդ. քանզի նախ գալստեամբ քով բարիս առնես զաւակաց ողորմած հոգւոյն բերելով զնոսա ընդ քեզ. երկրորդ՝ վասն վերոյաստացեալ դրամոյն կարգադրելոյ աստ. քանզի եթէ այդ դնիցի կումպանուին՝ միայն հարիւրին չորս կամ հինգ լինի եկամուտն. և աստ՝ հարիւրին ինն. և յետ սորա՝ որպէս յառաջագոյն գրեալ եմ՝ յարգութեանդ՝ այժմ եւս գրեմ, գոլով մի ի կտակակատարաց և ի ժառանգաց ողորմած հոգւոյն, ի կողմանէ իմէ բարդեալ ի վերայ 7300 հուն, 32 ֆանմ 27 կաշին՝ տասանորդս ժառանգութիւնն իմոյ, որ լինի իբրև 3000 կամ 3100 հուն ժառանգութիւնն իմ, ի կողմանէ ամուսնոյս 30 կամ 32,000 հուն եւ խոստանամ. այս առնեմ վասն բարութեան օրինաւոր եղբարց և քեռ իմոյ, որպէս զի հայրութիւն քոյ մի հեռացիս ի նոցանէ. և երկրորդ՝ որպէս գրեցի հայրութեանդ յառաջագոյն վասն կատարելոյ զկամս և զկարծիս օրինաւոր հօր իմոյ՝ զորս ի ձեռն մահուն ոչ ժամանեաց բազմանացն. ապա ուրեմն որչափ պարտին օրինաւոր եղբայրք իմ վասն կատարելոյ զկամս և զկարծիս օրինաւոր ծնողի իւրեանց. և երկրորդ՝ վասն վարձատրելոյ յարգութեանդ, զորս երկայն միջոցաւ ապահով եղեր նոցա իբրև հայր. վասն օրինաւոր քեռ իմոյ և սիրելի Լուիսին ոչ կարեմ ասել. բայց վասն սիրելեաց իմոց Աղեքսանդր և Յովհաննէսին ոչ երկբայիմ զի հետեւեցին կարծեաց իմոց, ըստ վկայելոյ հայրութեանդ թէ բարի զաւակք են. յատկապէս եղբայրն իմ Աղեքսանդրն՝ որ հնդապատիկ ունի ժառանգութիւն քան զայլսն, որպէս ի զրի ողորմած հոգւոյն կարէք տեսանել այդր. զի ամենայն ստացուածս իւր 16 բաժին է արարեալ. 6 բաժին դնել ի զանձարանի տէրութեանն Անկլիացւոց, որպէս զի եկամուտն սիրելի Աղեքսանդրըն վայելեացէ. և 10 բաժին հուն բաժանիցի ի մէջ հնգեսին զաւակացն. և ամենայն ստացուածք ողորմած հոգւոյն գումարին դոյզն ինչ յաւելի կամ պակաս իբրու 270,000 հուն՝ ազատ յամենայն ծախուց կորուսեալ համարեցեալ դրամոց, և այլն՝ վասն որոյ թուի ինձ, վերապատուելի, զի գալուստն քոյ ոչ է ունայն լինելոց՝ այլ պըտղաբեր նախ վասն բարութեան սիրելի մանկանց ողորմած հոգւոյն, զորս եօթնամեայ ժամանակաւ ճգնեցիր վասն նոցին, ոչ ունայնաւոր վաստակք յարգութեանդ. և երկրորդ՝ վասն բարութեան ազգիս հայոց, զորս ոչ երկբայիմ թէ ըստ կարծեաց իմոց յաջողեացէ վերջապէս՝ վերապատուելի հայր, զամենայն ինչ գրեցի յարգութեանդ, զոր ինչ միաք իմ ձկտէր, և այլն թողում վերապատուելոյն մտածել և առնել զայն որ արժանն էր »:

Շարունակելի